


ԲԺ. ԳՐ. ՍԱՂՅԱՆ

ԶՐՈՒՅՑ
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՒԴԻ
ՄԱՍԻՆ



616.9
U-16

ՀՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

616-9
U-16
Արք

ԲԺ. ԳՐ. ՍԱՂՅԱՆ

04 AUG 2010

ԶՐՈՒՅՑ
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՒԴԻ
ՄԱՍԻՆ

248

3107

4007



15602-57

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

26 JUL 2013

7311

ԹԵՏՀՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Հրատ. № 974 Պ. № 452
Տիրաժ 2000
Գրասեպալար № 2024 (բ.)

Աշնան մի արև որ, կիրակի առավոտ, գյուղ-
դացիք ժողովզել ելին գեղամեջ ու զրույց ելին
անում: Գլուղի սրախոսներից մեկը՝ Ղազար բի-
ձեն, դիմեց Սարգսին, վոր նոր եր վերադար-
ձել սանատորիայից.

— Այ տղա, Սարգիս, դե՛ մի պատմի տե-
նանք ի՞նչ բան ա ետ սընատորը, վոր քեզ ը-
տենց լավ բժշկեց:

— Դորթ, մի ասա տենանք, ետ ի՞նչ մա-
շին ա, վոր հիվանդի ներսը թամաշա յա անում,
հիվանդությունն ել տեղնուատեղը զտնում ու
իստակ մաքրում, — հարցրեց Թավադ ամին, վորի
վորդին ել, ահա մի տարի յեղավ, տաքության
մեջ, անկողին ընկած հազում ու տրյուն եր թա-
փում:

— Թավադ ամի, — ասաց Սարգիսը, — դե՛,
գիշատ ելի, յիս ձեր Արսենիցն ել խարաբ ելի,
են անդեր հազը խեղզում եր ինձ, որումեջ ել
արին ելի թափում, ամմա դե, վոնց վոր տե-
նում եք, ել են Սարգիսը չեմ, ել հազ չունեմ,
արինն ել շուտունց ա կարել. առաջ ենքան
քրանում եյի. տաքությունն ել լեզուս չորացնում
եք: Դորթ ա, սընատորումը թողին վոչ, վոր մի
ամիս տեղիցս ժամ գայի, ամմա բժիշկը վեր-

ջումն ասեց՝ Սարգիս, չհավատաս, վոր քեզ դեղերն են ոգնել, հենց ետ հանգիստ պառկելդ ա, վոր տաքությունդ կարեց, հազդ ել քրախնքդ



Նկ. 1. Թոքախտ,
սինչև բժշկվելը.



Նկ. 2. Բժշկվելուց հետո.

ել քեզանից ուադ ըլավ: Երկու ամսից հետո ել են մաշինովը մտիկ տվեց, ասաց՝ Սարգիս, հիմի վոր շատ լավ եք: Ամմա, Թավադ ամի, վոր կարծում ես, թե ետ մաշինովն ա, վոր թոքախտը բժշկվում ա, սխալվում ես: Մաքուր ողը, հանգիստ կրանքը, լավ մնունդը, ըտոնք են թոքախտի դեղը: Են վոր ասում ես, են աժդահա մաշինի

անունը Ռենդզեն ա, նրանով վոր մտիկ են անում, վողջ ներսդ յերեսում ա, բժիշկը հերթով: հիվանդներին նայում եր, մեզ ել շանց եր տալի հրես, ասում եր, աջ թոքի ծերումն ա թոքախտը բուն դըել, հրես, ես փուչ տեղը տեսնում եք, ետ են անդեր բացիներն են լափել, փչացրել թոքերը:

— Թոքախտը, մըն ել չըխոտկան մին ազար ա, — հարցը եց Թավադ ամին:

— Նույն հիվանդությունն ա, Թավադ ամի, չըխոտկան ոռուսերեն ա, թոքախտը հայերեն, — ասաց Սարգիսը, — թոքախտն ել, վասկրացավն ել, հրես ես ըրելսոց վզի յարեքն ել, ըտոնք վողջն ել մի արմատից են. ետ արմատի անունը, ասում ա, տուցերկուլող ա:

— Բա ըտոր անունը, ըտոր բուքն ու արմատը կտրվի, ընչից ա առաջ գալի ետ թոքախտը, — հարցը եց Թավադ ամին:

— Այ տղա, Սարգիս, զ՞րդ ա, վոր ետ թոքախտը բողոջներից ա առաջ գալի. մեր ես շրջանի են ջահել բժիշկն ասում ա՝ ետ բողոջները վոր չըլելին, են ա, ասում ա, աշխարքումը ել թոքախտ չեր ըլի, — հարցը եց Ղազար բիձան:

— Ղորթ ա, Ղազար բիձա, բողոջի նման կենդանի յեն, ամմա ըտոնք բողոջ չեն, անզեն աչքով ել չեն ըրեսում: Մի տեսակ մաշին կա,

ետ անդերի անունն ել մտիցս հանում եմ. հրես տեսրակումս բժիշկը գրել ա տվել. հա, միկրոսկոպ ա, հայերեն՝ սանրադիտակ, ետ միկրոսկոպն ել խոշորացուց շուշաներից ա շինած. թե վոր նրա տակին մի մազ ես դնում, ասես մի գերան ըլի, ենքան ա մեծացնում: Բժիշկն ասեց, վոր հազար անգամ ա մեծացնում: Են ա, վոր թոքախտը առաջացնող կենդանի իքերը դնում են ետ խոշորացուցի տակ, ըտոնք հազիվ մի աննշան փշի կտորի լեն նմանվում, վոնց վոր մատը մի պուճուր փուշ մոնի, մարդ աչքը սրի, վոր տենա: Բժիշկը մեզ շանց եր տալի մանրադիտակի տակ ետ փշի կտորները, ասում եր՝ տեսեք, խոշորացուցվ հազիվ ա ըրեսում, ետ ել հըլա հազար անգամ մեծացրած. դե պարզ բան ա, ասում ա, մարդու անգեն աչքը ըտոնց չի կարա տենա: Բտոնց անունն ել բացիլ են ասում:

— Դե են ա՝ ասա՛ ետ բացիլի դիմաց լուն ուղտի չափ կերեա, ելի,—ասաց զազար բիձան:

— Բա վոր աչքով լերեսում չի ետ անդերը, վհնց են բռնում. դնում խոշորացուցի տակ,—հարցը բացի թափաղ ամին:


— Թափաղ ամի, դու ետ հարցդ միտդ պահի, յես մի բան հիշեցի, պատմեմ, տես թե ետ բացիլների բռնը վոնց են գտել: Այ տղա, հենց

վոր վոտս դրի ետ սընատորը, են իմ անդեր հազս բռնեց, դե բերանս խուխով լցվեց. թքեցի գետնին: Մին ել տեսնեմ, այ տղա, ետ սընատորի ծառայողները դեսից-դենից վազելով զալիս են դպահինձ. մնացի շվարած, սընատորի հիվանդներն ել ինձ մտիկ են տալի ու ծիծաղում: Սընատորի քույրերն ել վուազ յեկան, մի քույր ել ինչ-վոր շուշից դեղ ածեց խուխիս վրա, հետո խուխս մի թիակով բարձրացըրեց, ածեց մի թքամանի մեջ. զլիսի ընկա, վոր եղքան աշխատանքի պատճառը իմ անդեր խուխն ա: Տենամ բժիշկն ել եկավ, ձեռքով արավ, վզդջ հիվանդները դես ու դեն գնացին, հետո մոտեցավ ինձ, անունս հարցըրեց. ասացի՝ քեզ ծառա, Սարգիս. եսորվա նման միտս ա, վոր բժիշկը ասեց՝ Սարգիս, դորթ ա, մեր յերկրում շատ ծառայողներ կան, յես ել եմ ըստեղ ծառայող, ամմա հիմի ել ծառա չկա, դժբախտաբար, ասեց, տգի ոութիուն շատ կա: Եղ տգիտութիունն ա պատճառը, ասեց, վոր դու խորխամանի մեջ չթքեցիր, այլ գետնին թքեցիր: Դու, ըրեսում ա, ասեց, ծանր հիվանդ ես, խուխով վարակիչ ա ուրիշների համար: Թոքախտը առաջ ա գալի հիվանդ մարդու խուխի մեջ ;եղած բացիլներեց, ետ միտդ պահիր. ըտոր համար ել, ասեց, դեղ ածեցինք խուխիդ վրա, վոր խուխով անմասս

դարձնենք։ Դու դեռ նոր ես յեկել, մեր որինք-ները քեզ հայտնի չեն, վնաս չունի, ասում ա, կամաց-կամաց կսովորես։

— «Ներողություն,—ասեցի,—դեղացի յենք հասկանում չենք»։

— Սարգիս, ասեց բժիշկը, սիրտդ մի՛ նեղացնի, վնաս չունի, հրես կտեսնես՝ մի լավ կրծշկվուս, հետո ել ենքան բան կսովորես, վորտուն գնաս, դեղումն ել քո սովորածը մեկ-մեկ կպատմես գեղացիներին, Ամմա, ասեց, միտդ պահիր, վոր քու խուխիդ մեջլնենց կենդանի եակներ կա, վոր թոքախտ ա առաջ բերում։ Մեր սընատորի թքամանները տեսնում ես, դեղեցիկ տեսք ունեն, ըտոնցից, ասում ա, դժվար զըտնես ձեր գեղում, ամմա, ասում ա, մի կոտրած աման, մի պեսձիկ միշտ կըլի, մեջը միթիչ ջուր ածիր ու նրա մեջ թքիր. յերեսն ել մի հաստ թղթով կամ տախտակով ծածկիր, վոր ճանճ չմտնի մեջը. տեղն ել, ասում ա, բարձր ըլի, վոր շուն ա, կատու ա, հավ ա, գլուխները չքցեն մեջը, չորեքթաթ տվող ըրեխեքն ել ձեռքերը մեջը չքցեն։ Բաենց զրից անելով, ձեռքը ձեռքիս զցած՝ բժիշկը տարավ ինձ իրա սենյակը։ Հստեղ ինձ կշուցին, չափեցին, զոշս վեր թակեցին, հետո բժիշկն ասեց՝ եսոր ենքանը բավական ա, հոգնած ես, գնա պառկի, հանգըս-



Նկ. 3. Ի ի լ ի շանի սանառողիան.

տացի: Հետո նշան արեց քույրերին, ըտոնք ել ինձ ոգնեցին, շորերս հազցըին ու թևիցս բռնած տարան բաղի միջով. բաղ, ինչ բաղ, հազար տեսակի ծաղիկներ, ոյին-ոյին, փունջ-փունջ սարքած, ամեն մի անկյունում ել են թքաման-ներից շարած. մեր գեղի ուսումնարանը ենքան մաքուր չի, վորքան ետ սլնատորի հայտը: Մի թղթի կտոր ել ա չի ըրեւում:

— Քույրերը աարան ինձ մի ոթաղ, ըտեղ երկու հոգի ել պառկած ելին: Շորերս հանեցին, ջանս սառը ջրով սրբեցին, ձեռքերս, ատամ-ներս լվանալ տվին, մաքուր կողինքի մեջ պառ-կացըին. հետո խրատ տվին, թե վոնց. պետք ա սապնով լերեսս լվանամ. ատամներս ամեն ու-տելուց հետո լվանամ, ձեռքերս ուտելուց ա-ռաջ մշտական լվանամ. հազարուց ել, ասեցին, ես կողքիդ դրած թքայանի մեջ կթքես: Առաջ-վա վախտը, ինչ սեղքս թազցնեմ, կարծում եյի, վոր զեղացի յեմ, ծաղրում են. շաբունակ, մեծ-փոքը, վողն ել խուխից ելին խոսում—ըսենց կը-թքես, ընենց կխորխես: Եղ իրիկունը, իւ հարեան մի թուրք կար, Ալի յեր անունը, ասում եր՝ մեր բժշկի զրիցներից հետո հասկացել եմ, վոր հի-վանդների են անդեր խուխն ա, վոր ուրիշնե-րին վարակում ա: Ալին պատմեց, վոր իրա կին ել, ըրեխեն ել հազում են, տաքութիւն

են տալի, ծակոցներ ունեն, ասում եր՝ հիմա յես ել եմ գիտում, վոր իմ հիվանդ թոքերից դուրս լեկող խուխն ա յեղել պատճառը, վոր ը-տոնք ել թոքախտով հիվանդացել են: Մեղ վո-չոք չի ասել, վոր չի կարելի գետնին թքել, վոր թքում ես, չորանում ա, փոշի դառնում, հետո ողի հետ խառնվում: Ալին դորթ եր ասում. այ ջանըմ, ասում ա, վոր ետ բացիլները աչքով տեսնենք, ինչ ֆալքա կա դրանից. վոր ողի հետ խառնվում ա, են ա՝ ուզես-չուզես, մին ա, պետք ա շնչես եղ ողը. առանց շնչելու կարան ապրես: Պետք ա, ասում ա, են անդեր խուխը ալրես, վոչնչացնես, վոր անվտանգ դարձնես: Հրես, ասում ա, վոր լավանաս, բժիշկը քեզ ել ա տանելու շանց տա՝ վոնց են խուխը հավաքում, տանում ածում ոջախի կրակի մեջ, խուխամանն ել քցում մի դազանի մեջ, եփ տալի:

— Թռվադ ամին հարց տվեց, թե եղանտե-սանելի բացիլը վոնց են բռնում-դնում խոշորա-ցուցի տակ: Դե իմ զրիցից են ա պարզվեց, վոր ետ բացիլները թոքախտով հիվանդի խուխի մեջ ա ըլում:

— Սընատորի կնիկարմատ բժիշկներից մինը հենց մենակ ետ գործովն ա պարապում: Են ա ամենոր գալիս եյին մեր խուխը տանում նրա մոտ. Ին ելետ խուխի թանձր տեղիցը բառում եր մի կտոր

շուշի վրա, կապույտ-կարմիր ներկ ածում վրեն,
կրակի վրա տաքացնում, լվանում, չորացնում ու
դնում խոշորացուցի տակ: Բժիշկն ասում եր՝
լավ մտիկ արեք, վորը վոր, ասում ա, կապույտ
ա ըրեւում—ետ, ասեր, խուխի կտորներն են, վո-
րը, ասում եր, ասեղի ծերի չափ կարմիր այերեւում,
ետ, ասում ա, հենց են բացիլներն են, են կեն-
դանի եյակները, վոր թոքս խտ են առաջ բե-
րում: Խոշորացուցի տակ բացիլները անշարժ են,
ամմա, ասում եր բժիշկը, ըտոնք շատ սիրում են,
մարդու մարմինը, ընտեղա, ասում եր, ըտոնց ա-
ճելու տեղը: Ըտոնք ել, ասում եր, ուրիշ կենդանի
եյակների նման, մարդու մարմնի մեջ աճում են,
զարգանում, իրանց նմանը աշխարհ բերում, վո-
չընչանում, վոր տեղ տան նորերին: Մարմից
դուքս, որինակ, խուխի մեջ ըտոնք, ասում ա,
աճում չեն, ամմասաղ են մնում: Խուխը, ասում ա,
վոր չորանում ա, փոշի դառնում, ելի ետ բա-
ցիլները սաղ են մնում: Են ա, վոր մենք ետ փո-
շին ողի հետ ջնշենք, իհարկե, ասում ա, բացիլ-
ներն ել ողի հետ կմտնեն թոքերը ու ընդեղ
բուն կդնեն ու կսկսեն ենապես աճել, ասում ա,
վոր նրանց սերունդը կարող ա միլիոնների հաս-
նել: Մի բանից վոր վախենում են ետ բացիլ-
ները—ետ արեկ լույսիցն ա: Արեկ տակ ըտոնք
մի սհաթումը կոտորվում են:

— Բա վոնց են իմանում, վոր ետ անդեր
բացիլները սաղ են,—հարցը եց թափաղ ամին:

— Թափաղ, հըլա մի սպասի. ասենք թե,
վոնց վոր ասում ա, մի աննկատելի փշի կառը ա
մտել մատղ, կամ թե, վոնց վոր ասում ա, եղ
բացիլը մտել ա ողի հետ թոքիդ մեջ. հետո ի՞նչ
ա ըլում,—հարց տվեց Ղազար բիձան:

— Ղազար բիձա, դու վոր ուսում առնե-
յիր, իմաստուն կդառնայիր: Մեր բժիշկը վոր
մեզ հետ զրից եր անում, են ա եղ փշի որինակն եր
բերում: Ասում եր՝ վոր փուշը մտնում ա մատղ,
մի յերկու որից հետո եղ փշի չորս կողմը կար-
մըրում ա, ուռչում, ցավ ու տաքություն առաջ
բերում, պատահում ա, ասում ա, վոր թարախ
ել ա կապում: Եղ թարախն ել կամ պատովում
ա, փուշն ել հետը գուրս բերում, կամ ել, ա-
սում ա, մտնում ա մարմնի խորքը, արնի հետ
խառնվում ու մարգուն կարգին հիվանդացնում:
Մին ել, ասում ա, մարդուց-մարդ մեծ զանա-
զանություն կա. որինակ, մարդ կա, վոր մի
դարտակ փշից ծանր հիվանդանում ա, մի ուլիշն
ել, ասում ա, խանչալի տակ ա ընկնում, ամ-
մա շատ շուտ առողջանում:

— Եղ ի՞նչ խանչալի նաղլ ա,—հեռվից հար-
ցը եց գյուղխորհրդի նախագահը, վորը գյուղի
ուսուցչի և խրձիթվարի հետ գալիս եր դեպի
զրիցատեղը:

— Բարնվհազար բարի, — ասաց Ղազար բիծան, — համեցեք: Մեր Սարգիսն ա, սընատոր ա գնացել, 2 ամսութիւն ել թաման պրիֆասոր ա դառել, յեկել: Ասում ենք՝ պատմի տեհանեք, եղ վոնց են ետ սընատորում բժշկում թոքախար: Մենք ել համ ես արևում մեր վոսկըներն ենք տաքազնում, համ ել զրից անում:

— Ե՛յ տղա, ես ինչքան մարդ ա ժողովվել, կարգին ժողով գուրս յեկավ: Ես հենց շատ լավ առիթ ա, — ասաց ուսուցիչը, — միքիչ ել մեր մաքրութիւնն մասին խոսենք, վատ չի լինիլ. Սարգիս, դու շարունակի խոսքդ:

— Ինձ մեր սընատորի բժիշկն ա թափշուր արել. ասում եր՝ եսքան վոր քեզ բացատրում եմ, հասկացնում եմ, մենակ քեզ համար չեմ ասում, Սարգիս. կրկնել եր տալիս վողջիս իր պատմածը, ասում եր՝ Սիմավոն, Սարգիս, Գեղամ, Ալի, Մահմեդ. Տիգրան, դե մի պատմեք, տենամ՝ ինչ հասկացաք ասածներիցս:

— Եղ լավ ե, վոր ազգային փոքրամասնությունից ել ընկերներ կալին սանատորիայում, — ասաց խրճիթվարը:

— Վո՞նց չե, բժիշկն ըտոնց համար առանձին թուքերեն եր բացատրում, պատկերներ շանց տալի, Ոենդգենով նայում հիվանդներին, միկրոսկոպի տակ բացիլն ըլ մեզ մտիկ տալ տալի:

— Խի՞ յես զարմացած յերես շինել, ընկեր վաղո, — ասաց Ղազար բիծան խրճիթվարին, — բա ըտոր համար եմ ասում, վոր մեր Սարգիսը պրիֆասոր ա դառել, յեկել:

— Շարունակիր, Սարգիս, շարունակիր, ինչ վոր խանչալից երիր պատմում. — ասաց գյուղիորհրդի նախադահը:

— Բժիշկն ասում ա՝ մարդ կա, վոր խանչալի յարեն ել ա հեշտ տանում, մարդ ել կա, վոր մի հասարակ վշից՝ տենում ես՝ ծանր հիվանդացավ. նայած թե, ասում ա, ինչ մարդ ա հիվանդանում կամ ընչից ա հիվանդանում: Թե վոր անշունչ առարկա յա հիվանդությունը առաջ բերում, ինչպես, որինակ, վշի կտոր ա մատը մտնում, կամ քարի կտոր ա աչքը մտնում, եղ վախտն, ասում ա, տեղնուտեղը կարմըրություն ա առաջ գալի, ուռչում ա, տաքություն ու ցավ ա ըլում. ըտենց փոփոխությունը մարմնի զանազ ան մասերում մենք, ասում ա, անվանում ենք ըորընըում. են ա վոր կենդանի բակն ա մտնու մարմինը, ինչպես բացիլն ա, ըտոնք ել են տաքություն, կարմըրություն, ցավ ու ուռուցք տալի, ամմա, ասում ա, ետ բացիլները թույն ել են պատրաստում, ինչպես, որինակ, սունկ ա ըլում թունավոր: Են կարմըրությունից, տաքությունից, ուռուցքից, ցա-

լից բաշխա, այսինքն, ասում ա, բացի բորբոքումից, ըտոնք, ետ բացիները մարմինը թունավորում են։ Ըտոր համար ել, ասում ա, տաքությունը, ցավը մենակ տեղնուտեղը չի ոլում, վոնց վոր փուշի վախտը, ազ, ասում ա, ամբողջ մարմին մեջ ա ցավ ըլում կամ թե տաքություն։ Բացիներն ել, ասում ա, վողջն ել թունավոր չեն ըլում, վոնց վոր ամեն սունկ չի թունավոր։ Վոնց վոր, ասում ա, սունկի ոգտակարն ա ըլում, ընենց ել բացիների ոգտակարն ա ըլում։


— Այ տղա, Սարգիս, ասում եր բժիշկը, սկի դու խաբար ես, վոր են մածունը, վոր ամեն որ չես ուտում, կամ են հացը, վոր ամեն որ ես ուտում, առանց բացիների ոգնության վոչ մածնի կնմաներ, վոչ ել հացի։

— Մածնի մերանի մեջ ել, հացի թթխմորի մեջ ել շատ բացիներ կան, ելի տուբերկուլոզի բացիների պես անտեսանելի։ Եղ բացիներն են, վոր, ասում ա, ալյուրը հաց են շինում, կաթը մածուն, գինին քացախ, ուրեմն, ասում ա, ոգտակար բացիներ են։ Են ա վոր, ասում ա, վիասակար բացիները, ինչպես տուբերկուլոզին ա, շատ մեծ պատուհաս են մարդու համար։ Շատ հիվանդություններ կան, վոր աշխ սրբում շատ մարդ են կոտորել միլիոն-

ներ, հարյուր միլիոններ։ Որինակ, ասում ա, ժանտախտը, խոլերը, ծաղիկը, տիֆը, բկուռուցը քութեցը, սիֆիլիսը և շատ շատերը ըտոնցից ամեն մեկն եր ասում ա, իրա բացիները ունի։ Մեկը նրանցից, ասում ա, ճանձի կեղտի ա նմանում, մեկը ասղի ծերի, մի ուրիշ տեսակն ել յա ըտոնցից բարակ ա ըլում յա կարճ, յա հաստ ու լերկար։ Հտոնցից ամեն մեկն եր ասում ա, իր խասիաթն ունի։ Վոնց վոր, ասում ա, թըթխմորի բացինը կարող չի մածուն շինի, կամ մածնի բացինը կարող չի գինին քացախ շինի, ընենց ել, ասում ա, խոլերի բացինը կարող չի ժանտախտ առաջ բերի։ Խոլերի բացինը մենակ խոլերի առաջ կրերի, ժանտախտի բացինը մենակ ժանտախտ կրերի, վոնց վոր տուբերկուլոզի բացինը մենակ թոքախտ ա առաջ բերում։

— Կեցես, կեցես Սարգիս, շատ լավ հասկացել ես բժշկի ասածը և շատ ել պարզ պատմում ես.—ասաց ուսուցիչը։

— Ասում ա՝ ամեն մեկն ել ետ բացիներից իր խասիաթն ունի. որինակ, խոլերի բացիները սիրում են աղիքների մեջ բուն դներ լոտոր համար ել, ասում ա, ով վոր խոլերա տեսել ա, կիմանա, վոր խոլերով հիվանդը սաստիկ փորի ցավ ա ունենում ե շատ լուծում ա, ենքան ա լուծում, վոր հալից ընկնում ա։ Ժանտախտն,



15609 - 57

ասում ա, աճուկների, կռան տակերի, վզի խուլերն ա ուռչեցնում, թարախ կապում, վողջ մարմինը թունափոռում, փորի տիֆի ժամանակն ել ելի աղիքներն են հիվանդանում, մի ուրիշ տեսակ տիֆի վախտը, վոր բծավոր են ասում, արյունն ա վարակվում, մարդուն տաքության մեջ խրովում: Եդ բացիկների առաջ բերած հիվանդություններն ել յերկար չեն տևում: Ելի, ասում ա, նայած մարդու կաղմվածքին, միքանի որում, կամ միքանի շաբաթում հիվանդությունը յադես ա կտրում, յա դեն: Ըտոնց խասիաթն ընենց ա, վոր հիվանդի մոտ յեղած մարդիկ ել ետ ազարից ընկնում են. վոնց վոր մենք ասում ենք՝ կպնող են: Ըտոր համար, բժիշկն ասում եր, ետ հիվանդություններին մենք վարակիչ հիվանդություններ ենք ասում:

— Բա ասում ելի՞՝ թոքախտն ել ա վարակիչ, — ասաց Թափադ ամին:

— Վոնց չի վարակիչ, շատ ա վարակիչ, թոքախտից շատ ավելի զոհեր ա ըլում, քան ուրիշ վարակիչ հիվանդություններից: Ամմա, ասում ա, մարդ վոր նրանով վարակվում ա առաջի վախտը սկի ինքն ել գլխի չի ընկնում, վոր հիվանդ ա:

Թօների տուբերկուլոզ (թոքախտ)

— Թափադ ամի, են ա դու զիդաս ելի, վոնց վոր յես, ընենց ել ձեր Արսենն եր: Առաջի վախտը ասում ելինք մրսել ենք, մի հանդի ջանդ կոտրատում ա, քրտինք ա գալի, մեջքդ յա կուրծքդ ծակում ա, հազդ ել առաջի վախտը կենտ-կենտ ա ըլում, վոնց վոր մրսած մարդունը կըլի: Ամմա դեհետո ետ անդերը յավաշրավաշ մարդուն հալից քցում ա, տաքություն ատալի, ախորժակդ կապվում ա, դոշիդ ցավը շատանում, խուխոդ ել անվերջ գալի. պատահում ա, վոնց վոր մեղ հետ եր, արին ա գալի:

Վոսկրի յեվ գեղձերի տուբերկուլոզ

— Են ա վոր ետանդեր բացիկները վոսկրի մեջ են բուն դնում կամ զեղձերի—մարդիկ, ասում ա, ցավ են զգում տեղնուտեղը, վոսկրը կամ գեղձերը ուռչում են, կարմրում, պատահում ա



Նկ. 4. Գեղձերի, վոսկրների և փորի թաղանթի ուռչութերկուլոզ.

Թարախ են կապում. ետ թարախն ել, ասում ա, միշտ մի ճամպայ յա փնտում զըպա դուռը, մարմինը, ասում ա բժիշկը, կարծիս թե աշխատում ա եղ անդուրեկան բեռից մի կերպ ազատվի:



Նկ. 5. Գեղձերի տուբերկուլոզ.
Եերկամունքների տուբերկուլոզ


— Պատահում ա, ասում ա, վոր բացիները բուն են հաստատում պլոճիկների մեջ. են վախոը, ասում ա, հիվանդը մեջքումն ա ցավ զզում, ելի տաքություն ա տալի, մեզի հետ ել, ասում ա, թարախ ու արյուն ա գալի. մարդիկ, ասում ա, հալումաշ են ըլում, զոհվում եղ հիվանդության:

Աղիքների տուբերկուլոզ

— Թե վոր ետ բացիները աղիքների մեջ են ընկնում, ընդեղ ել են բորբոքման նշաններն ա առաջ գալի, այսինքն, ասում ա, աղիքները ներսի կողմքց կարմրում են, ուռչում, տաքություն առաջ բերում, թարախ կապում: Հտոր համար ել աղիքների տուբերկուլոզի վախտը հիվանդի դուրս գնացածի մեջ արին ել ա ըլում, թարախ ել, խլինք ել: Աղիքի չորս կողմը, փարզի մեջ յեղած զեղձերն ել (խուլերը) ուռչում են, սաստիկ փորի ցավ առաջ բերում: Պատահում ա, վոր փորի փարզեն ա հիվանդանում. են վախտը, ասում ա, փորը ուռչում ա, ջուր հավաքում: Հտենց հիվանդներ շատ կան սընատորումը, բժիշկը համ պատմում եր, համ ել շանց տալիս ետ հիվանդներին:

Կոկորդի տուբերկուլոզ

— Մին ել տենում ես՝ եղ անդեր բացիլը մարդու կոկորդումն ա բուն դնում. առաջի վախտը աննկատելի, հետո ուտելուց ցավ ա ըլում բողազումը վերջումը հիվանդը վախում ա վոր մի պատառ դնի բերանումը, հալվում ա, մաշվում, ձենն ել կտրվում ա:



Նկ. 6. Մաշկի տուբերկուլոզ. մինչև բժշկվելը:

Ել արեն ա. ինչքան ըտոնք սկանան արեի տակ, ենքան շուտ կլավանան:

Ուղեղի թաղանքների տուբերկուլոզ

Սարգիս, ասում եր, լավ միտդ պահիր, տես, թե եդ անդեր առւբերկուլյողի բացիները ինչ տեսակ-տեսակ հիվանդություն են առաջ բերում. որինակ, ասում ա, շատ մացրեր կան, վոր կար-

Գայլուկ


— Աընատորումը միքանի հիվանդ կալին, յերեսները, ասես, գել կրծած ըլեր. քիթն ու պոռնկները ուռած, թարախ կապած, կողքերքն ել քերված: Բժիշկն ասում եր՝ ետ ել կաշվի տուբերկուլյոզ, հայերեն գայլուկ են ասում:

— Մաղ որը արեի տակ տկլոր պառկած են ըլում: Բժիշկն ասում ա՛ վոնց վոր վոսկրի տուբերկուլյոզ ունեցողների համար, ըտոնց ճարն ել արեն ա. ինչքան ըտոնք սկանան արեի տակ,


Նկ. 7. Մաշկ

Կուլուղ.

հե



Կիտուբեր-
բժշկվելուց
առ.



Նկար 8. Արևաբուժարան.

ծում են՝ իրանց ըրեխեքը դժվար ատամ հանեցին ու մահացան։ Բառնք ուղեղի փարզաների տուշերկույոգ են ըլում։ Ըրեխեքը կուչ են գալի, կծկվում են, համի բաշ լաց են ըլում, տաքություն են տալի, հետո ել սըստվում են, խելքը կորցրածի պես, վոչ տեսնում են, վոչ լսում, վոչ ուտում, վերջն ել հալումաշ դառած մահանում։ Ամմա, ասում եր, ըտոնք վողջը ծառի են բարակ ձղներն են. բունը, ասում եր, թոքախտն ա. հարյուր տուբերկուլյոզից 90-ն ընկնում ա թոքախտի վրա, միայն, ասում ա, տասն ա, վոր բաժին ա ընկնում վոսկրի, գեղձերի, պլոճիկների, աղիքների, կոկորդի, ուղեղի և մաշկի տուբերկուլյոզին։ Ամմա, ասում ա, մեկ ել եմ կրկնում. ընտոնց արմատը ընդհանուր ա։ Վոնց վոր, ասում ա, մարդից-մարդ, ընենց ել, ասում եր, բացիլից-բացիլ զանազանություն կա։ Մի մարդու մարմնի մեջ եդ բացիլը շուտա ա զարգանում, մեկի մոտ հիվանդությունը լերկար ա տեսում. ընենցն ել կա, վոր հիվանդանում ա, ամմա հիվանդությունը վոչ առաջ ագնում, վոչ յետ։ Կարծես թե, ասում ա, բացիլն ու մարդը են զլիսից պայման են կապում։ Մեկը իր կես թոքը, են մեկելը իր մի վոսկրը, մի պլոճիկը կամ յերեսի կեսը ետ անդերի ուսիցն ա տալի, վոր գոնե դրանով ձեռք քաշի։

— Ետ անդեր բացիլը տավարին ել ա կըպնամ, — հարց տվեց Դաղար բիձան։

Կովի տուբերկուլյոզը

— Սընատորումը եդ հարցը գեղացիք ելին շատ տալի բժշկին։ Բժիշկն ասում ա՝ տնալին կենդանիներից համարյա բուլորն ել կարող են տուբերկուլյոզվ հիվանդանալ, ամմա կովի ծծերի տուբերկուլյոզն ա հավոր։ Կարող ա կթելու վախտը ետ հիվանդ ծծերից բացիլները ընկնեն կաթի մեջը. ետ կաթն ել վոր մարդ խմի առանց յեփտալու, կարող ա հիվանդանա։ Ասում ա՝ ըրեխորցից շատերն են հիվանդանում կովի տուբերկուլյոզից։

— Սարգիս, — ասաց ուսուցիչը, — բժիշկը ձեզ ցույց չի տվել թոքախտով մահացած մարդու թոքերը։

— Մի անգամ շանց ա տվել. շուշի մեջ դրած սեացած թոք եր. ասում ա՝ սպիրտի մեջ ենք պահում, վոր չհոտի։ Այ տղա, ետ սեացած թոքի մեջ կորկի չափ ասես չորացած պանրի փշրանքներ ըլելին շաղ տված։ Մի տեղ ել թոքերումը մի ինձորի չափ փուչ տեղ կար, կողերքը ասես կրծոտած։ Բժիշկը բացատրում եր, վոր թոքերի մեջ ցրիվ յեկած պանրի կտորների նման իքերը իրանց մեջ միլիոնավոր բացիլներ ունեն։ Ասում եր՝ եդ բացիլների խասիաթն ա, վոր ըտենց

- թումբեր են շինում թոքերի մեջ. մարմին ուրիշ տեղ ել վորընկնեն, ելի, ասում եր, ըտենց փոքրիկ կորկի չափ թումբեր առաջ կըերեն: Հայերեն եղ թումբերին պալար են ասում. ըտուր հմար ել տուբերկուլյոգին հայերեն պալարախտ են ասում:

Վոչ մի ուրիշ տեսակ հիվանդություն, ասում ա, ըտենց պանրանման թմբիկներ չի դոյցնում: Բառը համար ել, ասում եր, մեծ-մեծ քաղաքներում վոր հազարավոր մարդկանց մարմինը մահանալուց հետո կտորում են՝ տեսնեն ինչոք ա մարդը հիվանդ ըլել յա ընչից ա մահացել, գտել են, ասում ա, վոր շատ-շատ մարդ տուբերկուլյոգով հիվանդ ա ըլել, ամմա ըտոնք ուրիշ պատճառից կամ ուրիշ հիվանդությունից են մահացած ըլել: Վորը գյուլի զոհ ա զնացել, վորը ծառից ա վեր ընկել-մահացել, վորը ջուրն ա ընկել խեղդվել կամ ուրիշ ազարից մեռել: Բառնց մարմին մեջ վոր են չորացած պանրի կտորների նման թմբիկներ են գտնում— են ա հասկանում են, վոր ես մարդը իրա վողժ ժամանակը տուբերկուլյոգով հիվանդ ա ըլել ամմա վոչ ինքը, վոչ ել իր մոտիկները ըտոր քաքար չեն ըլել: Դուս ա գալի, ասում ա, վոր մարդ կարող ա տուբերկուլյոգով վարակվի, հիվանդանա, ամմա վոչ ցավ իմանա, վոչ տաքու-

թյուն, վոչ արին թափի, վոչ ել խուխ ունենա: Ուրեմն, ասում ա, դուս ա գալի, վոր մարդը հիվանդանում ա տուբերկուլյոգով ու ինքն ինքը առողջանում, առանց բժշկի, առանց դեղի:

— Բա ել ասա բախտի բան ա,— ասաց Ղազար բիձան:

— ԶԵ, Ղազար բիձա, բժիշկն ասում եր՝ բախտի բան չի, ասում եր, ըտոր պատճառները շատ ա մճճված: Վոնց վոր, ասում եր, մարդից-մարդ տարբերություն կա, բացիկից-բացի զանազանություն կա, նայած թե վորն ա ըտոնցից ուժեղ, վորը թույլ, ենա, ասում ա, ապրուստից-ապրուստ ել զանազանություն կա, նայած թե ով վոնց ա ապրում: Վոնց վոր, ասում ա, տուբերկուլյոգի բացիկները շատ սիրում են մարդու թոքերը, վոր տասը հիվանդից իննը թոքախտի բաժինն ա ընկնում, ընենց ել, ասում ա, եղ բացիկները շատ սիրում են անձար ու աղքատ մարդկանց:

— Անդեր անեմ ըտենց սերը,— ասաց Թափադ ամին,— ըտոնց բոյն-բուսաթին մտիկ արա, աղքատն ու հարուստը ջոկելը:

— Տուբերկուլյոգը, ասում ա, վոչ մեծ ա ճանաչում, վոչ փոքր, ամմա, ասում ա, 15-ից մինչև 30 տարեկան հասակն ա, վոր ամենից, շատ զոհն ա տալի: Շատ ծնողների աչքի միջին, ասում ա, մազ ա բանում, մինչև վոր իրանց

Պետք ա, ասում ա, մեր տգիտությունը վերանա, մեր կյանքը, մեր նիստուկացը, մեր ապրելու ձեզ ենքան փոխվի, ենքան լավանա, վոր մեր բանվորի բնակարանը, մեր գյուղացու խըրճիթը մի-մի սընատոր դառնան։ Յեթե, ասում ա բժիշկը, ձեզնից ամեն մեկը աշխատի են թահրով ապրի, ինչպես սընատորի մեջ հիվանդներն են ապրում, յեթե, ասում ա, դուք զըագիտություն սովորեք, վոր ձեզնից ամեն մեկը մի գիրք կարդա, լրագիր կարդա, աշխարքիս լավս ու վատը հասկանա, յեթե, ասում ա, ձեր տանը մեծից սկսած փոքրը մաքրություն սիրի, վոնց վոր հրես ստեղ սընատորումն եք տեսնում, գետնին չթքի, հիվանդը ուրիշի յերեսն իվեր չհազա, ձեռքերը շուտ-շուտ լվանա, իր մարմինը մաքրուր պահի, շաբաթը մի անգամ լավ լողանա, առավոտներն ել սառը ջրով մարմինը շփի-տրորի, հետո, ասում ա, տունը մաքրուր պահի, ոթախն ամեն որ սրբի, ամմա, ասում ա, ընենց սրբի, վոր փոշի չբարձրանա, մի խոսքով, ասում ա, ամեն որ իրան ել, իր տունն ել ընենց պահի, կարծես ազիդ որ ըլի, վոնց վոր մարդիկ նորտարի որն են իրանց զուքում սարքում, տունն ել լավ իստակում-մաքրում, հետո, ասում ա, հետեի, վոր թե մեծ, թե փոքր առատ ոգտվեն գըրսի թարմ, մաքրուր ոդից, արևի փրկարար լուսից,

նրա ճառագայթներից, հետո, ասում ա, յեթե մեր գեղացիներից ու բանվորներից շատերը իրանց առողջությանը հոգ տանեն, մլասակար՝ ողու գիւնու ու թութունի ավելորդ ծախսերի տեղ կարգին ուտեն, ատամներն ամեն ուտելուց հետո լվանան, վերջապես, ասում ա, յեթե ամեն մի հիվանդի իր առանձին սրբիչն ունենա, յերեխաներից հեռու մնա, նրանց չհամբուրի, նրանց հետ մի կողինքում չպառկի, են ա, ասում ա, վոչ թե եդ անդեր ազարից, այլ, ասում ա, շատ ուրիշ հիվանդություններից ազատ կմնա։

— Այ տղա, յեկ ասենք՝ եդ անդեր յեթեն ա մեր տունը քանդողը, վոր ետ յեթեն ըլեր վոչ, են ա աշխարքը գրախտ կդառնար—ասաց Ղազար բիձան։

— Ղազար ամի, բժիշկն ասում ա՝ գեղացու տունը քանդողը հենց իրա տունն ա, վոր կարում չի մաքրուր պահի, իրա տգիտությունն ա, վոր նոր ուսմունքից, լավ խրամներից խըրտնում ա։ Լուսավոր յերկրներ կան, վորտեղ, ասում եր, խաբար չեն, թե վոնչիլը փորն ա, լուն ու բաղլինջը փորն ա, քաղաքներ կան, վորտեղ ճանձի հետք չի մնացել։ Շատ տեղեր թողում չեն, ասում ա, վոր մարդ փողոցումը գետնին թքի. ով վոր գետնին թքեց, կկարծեն, թե խելագար ա, կամ յեթե խելքը գլխին ա, շտրափ կառնեն

նրանից։ Ամմա, ասում ա, մեր գեղերում, քաղաքներում վոր ասես՝ գետնին չթքես—քեզ խելագարի տեղ կդնեն կամ կկարծեն, վոր իրան ծաղրում ես։ Ամեն տեղ ել թե փողոցումը, թե աշխատանքի տեղը, թե բակում, թե տանը խուխի համար առանձին ամաններ կան, թղթի համար ել առանձին հատուկ մարդիկ կան, վոր ամեն որ գալիս հավաքում են թե խուխը, թե անպետք թղթերը, տանում ածում կրակի մեջ, իսկ ամանին ել յեփում, վոր կեղտը, խուխի կտորները չման փոշի դառնան ու ողի հետ խառնը վեն։ Եդ վողջը բացիներին կոտորելու հմար անվում, Բառնք աչքով վոր ըրեսում չեն, մարդիկ միշտ ըտոնց մտքով են տենում. ուշքն ու միտքը ըտոնց հետ ա, վողջն ել, մեծ ու պուճուր, աշխատում են ըտոնց քյոքը կտրացնեն, վոր, ասում ա, նորից չմտնեն առողջ մարդկանց մարմինն ու վարակեն նրանց։

— Այ տղա, Սարդիս, յես հենց գիտամ՝ ձեր սընատորի բժիշկը խելոք մարդ ա. բա եդ ում դարդն ա կարել գեղի միջում, տանն ու տան հայթումը թքաման շարի. ձեր եդ բժիշկը խաբար ա, վոր գեղի միջով հարիրավոր տավար ա անց կենում, ըտեղ թքաման կղիմանա. ասենք դիմացավ ել, են ուժ դարդն ա կտրել եդ ամաների մեջ թքի. ասենք ըտոնց մեջն ել թքեցին—

բա ով պետք ա ըտոնք իստկի. դու խելք կըտրելի բան ասա, տես ուղում չենք սովորենք,— ասաց Ղազար բիձան։ Բըկում ա հոգնել ես, Սարգիս, մի պապիրոս քաշի, դինջացի։

— Զե, Ղազար բիձա, յես վաղուց եմ թուրզը տվել ծխելուն։ Մեր բժիշկը ասում ա՝ ծխելը առողջության շատ վաս ա։ Համ ողն ա ապականում, առողջությունը փչացնում, համ ել գըրպանին ա վաս տալի։ Բայր համար, ասում ա, մի ծխեք։

— Բնկերներ, եղակես վոր աղմուկ հանեք, բան չի հասկացվիլ, յես ել եմ ուղում միքանի խոսք ասեմ, — ասաց ուսուցիչը։

— Այ տղա, վարժապետ, բա ճիշտ չեմ ասում, բա եդ խելք կտրելի բան ա, վոր Սարգիսն ա պատմում, — ասաց Ղազար բիձան, — շատ ել ուրիշ լուսավոր յերկրներ կան, դու մեր դարդիցը խոսի։

— Բնկերներ, իհարկե, այսոր մեր պայմաններում հնարավոր չե այդ բոլորը իրադործել, այդ շատ խնդիրներից ե կախված։ Բայց եդ դեռ չի նշանակում, վոր մենք եդ ուղղությամբ չպետք ե մտածենք։ Սանատորիայի բժիշկը վոր պատմել ե եդ կրթված յերկրների մասին, խոմ ասել չի, թե վճիռ կայացրեք, վոր այնպես ապրենք, ինչպես եդ յերկրներում, վոր

մի գիշեր քնեք, վեր կենաք, տեսնեք եղ յերազը կատարված։ Զեղ համար պետք ե արդեն պարզ լինի, վոր տուբերկուլյոզ հիվանդությունը մի պատուհաս ե մարդկության համար, վոր նա միլիոնավոր զոհեր ե տանում մարդկանց աշխատունակ հասակից, բացի նրանից, վոր ետ խեղճ հիվանդներն են տանջվում, նրանց մահից հետո ել նրանց ընտանիքներն ել մնում են անոփական, հասարակությունն ել զրկվում ե իր աշխատող ձեռքերից։ Ահա թե ինչու տուբերկուլյոզ հիվանդությունը կոչվում ե նաև սոցիալական չարիք, պրոլետարների հիվանդություն կամ բնակարանային հիվանդություն։ Զեղ համար պարզվեց, վոր տուբերկուլյոզ հիվանդությունը առաջ ե գալիս բացիլներից, վոր եղ բացիլները բուն են դնում մեր մարմինի զանազան մասերում ու հալուսաշ անում մեր առողջությունը։ Ուրեմն դրանք, ետ բացիլները մեր թշմամիներն են, ավելի թունավոր, քան մեր դասակարգային թշնամիները։ Վերջինների տեղը մենք զիտենք, կարող ենք մեր կոփվը նրանց դիմ վորոշ ճանապարհով տանել, ինչ վերաբերում ե մեր անտեսանելի թշնամիներին, դրանք վնրաեղ ասես վոր չեն թագնվում, վոր տեղը ընկած վախտը մեզ հարգածեն։ Դրանց զենքը, ինչպես տեսաք, շատ ե թունավոր։ Ուրեմն մենք պետք ե լավ ուսում-

նասիրենք մեր թշմամուն, իմանանք նրա սիրած տեղերը, վորտեղ նաբնակություն ե հաստատում, ու հետո նրան հարվածենք, նրան զինաթափ անենք։

—Մինչև այդ բացիլների գյուտը հին մարդկի չգիտեյին եղ վարակիչ հիվանդությունների իսկական պատճառը։ Մեկը բացատրում եր եղ ազարը իրը աստծո պատիժ, մյուսը սուրբի բարկությունից, մի ուրիշը կարծում եր աչք ա դիպել, ժողովրդի եղ տգիտությունը զանազան կրօնների սպասավորները շատ խորամանկ կերկոպ ոգտագործեցին։ Ել յեկեղեցական թափորներ, ել սրբերի մատաղներ, ֆալչիների, տերտերների, գերվիշների ոյինբազություն չմնաց — բոլորն ել ել ավելի ելին ուժեղացնում եղ վարակիչ հիվանդություններից առաջացած ան ու սարսափը։ Այժմ, յերբ մենք սովորել ենք եղ հիվանդությունների իսկական պատճառը, ճանաչել նրան, մեզ համար ավելի հեշտ ե մեր թշնամուն գտնել ու հասկանալ, թե ինչ ենք ուզում անել վոր վերջ տանք ալդ բացիլների գոյության։

Սարգսի պատմածից ձեզ համար պարզ յեղավ, վոր տուբերկուլյոզի վարակը տարածելու մեջ ամենավտանգավորն ե ինքը հիվանդը, թոքախտավորը։ Նրա խորխի մեջ ե, վոր գտնվում են միլիոնավոր բացիլներ, վորոնք ներս են մըտ-

նում առողջ մարդու թոքերը և նրան ել վարակում: Թե ինչպես են եղ բացիները մտնում մարդու մարմինը, ձեզ արդեն հայտնի յեղափ: Դուք իմացաք, վոր յերբ թոքախտավորի խորխը ընկնում ե գետնին, չորանում ե ու եղ չուրացած խորխը փոշի յե դառնում ու խառնվում ողի հետ. առողջ մարդն ել եղ ողը շնչում ե ու վարակում: Այդ վարակվելու մի ճամպան ե: Վարակվելու յերկրորդ ճամպան ել այն ե, վոր թոքախտավորը ուղղակի հազում ե առողջի յերեսին. նրա հազի հետ դուրս յեկող շնչի մեջ ելի բացիներ են լինում: Դուք նկատած կլինեք, վոր յեթե շնչեք ցուրտ ապակիի վրա, եղ ապակին քրտնում ե, կամ թե ձմեռը մարդ վոր դուրսը շնչում ե, նրա տաք շունչը աչքով յերեռում ե, վոնց վոր ասում են՝ բուղը դուրս ե դալի: Ահա այդ. բուղի մեջ հազարավոր փոքրիկ ջրի կաթիւներ են լինում, իսկ ամեն մի եղ կաթիլի մեջ տուբերկուլոզի հարցուրավոր բացիներ են լինում, յեթե շնչողը ծանր թոքախտավոր ե: Ուրեմն դրանից մենք պետք ե մի բան սովորենք, վոր յերեք հիվանդը ուրիշի յերեսին չշնչի, չըփոշտա, հազարու ժամանակն ել միշտ իրա աղուխը բերանի առաջ բռնի, վոր ցալքունը ուրիշի յերեսին չկպչի: Իսկ վորովհետև աղլուխի մեջ հազարուց, փոշտալուց եղ աղլուխն ել բացինե-

րով կեղտոտվուժ, եղ պատճառով ել բժիշկներն ասում են, վոր հիվանդի աղլուխն ել, նրա սրբիչն ել պիտի առանձին լվացվեն, վոչվոք ել իրավունք չպետք ե ունենա եղ աղլուխից կամ սրբիչից ոգտվի: Շատ վատ սովորություն ե, վոր մալրը իր աղլուխով յերեխալի քիթն ու պոռնին ե սրբում: Յեթե մալրը հիվանդ ե, նա շատ հեշտությամբ իր յերեխալին կարող ե վարակել: Եդ պատճառով ել խորհուրդ են տալիս, վոր յերեխաները առանձին քնեն, ծնողների կամ հիվանդների անկողնում չքնեն: Հետո շատ վատ սովորություն ե, վոր յերեխաներին պաշպչում են: Յեթե ծնողները իմանալին, թե քանի-քանի անմեղ յերեխաներ են վարակվում ծանոթանձանոթի համբույրների պատճառով, յերեք չելին թողնի, վոր իրենց յերեխալին համբուրեն. նույնիսկ առողջներն ել պետք ե այդ որինակին հետեւն:

Վարակվելու յերրորդ ձեն ել—այդ մարսողության ճանապարհն ե: Յեթե մեր կերակրի հետ, մեր մննդի հետ, խառնվեն տուբերկուլոզի բացիներ, են ժամանակ հասկանալի յե, վոր մեր ուտելիքի հետ մենք եղ բացիներն ել կուլ կտանիք: Ասում ենք, վոր խորխը կարող ե չորանալ, փոշի դառնալ, խառնվել ողի հետ, և մենք կշնչենք եղ փոշի դառած խորխը: Իսկ յե-

թե եդ փոշին նստի մեր ուտելիքների վրա, հասկանալի յե, վոր եդ ուտելիքների հետ մենք բացիներն ել կուլ կտանք: Են պատճառով ել բըժիշկները խորհուրդ են տալիս, վոր մեր ուտելիքները միշտ լավ ծածկած պահենք: Իսկ յեթե ասում են՝ խորիսը թափիր խորխամանի մեջ, յերեսն ել ծածկիր, եդ նրա համար են ասում, վոր ձանձերը չժամանի մեջ ու հետո իրենց թերերի և վոտերի միջոցով չտեղափոխեն եդ կեղար մեր ուտելիքի վրա: Մանավանդ մեր բաց արտաքնոցները շատ են վտանգավոր, ձանձերը նստելով կեղար վրա՝ տզպալով գալիս նստում են մեր մննդի վրա կամ ընկնում ուղղակի կերակրի մեջ. եդ պատճառով խորհուրդ են տալիս արտաքնոցներից ոգտվելուց հետո, յեթե կիր չկա, գոնե հողով ծածկել. կան կենդանիներ, վոր իրենց կեղար հողով ծածկում են, կամ մի ուրիշ ձամպա ել, վորով բացիները կարող են ներս մտնել մեր մարմինը. եդ մաշկի միջոցով ե: Յեթե մտադ կտրել ես կամ մարմիդ մի տեղում պատվածք կամ վերք ունես, բացիները կարող են մտնել եդ ճեղքը և ալսուղից ել արյունի մեջ մտնել: Իսկ արյունի հետ այդ բացիները կարող են մտնել մարմինի զանազան մասերը: Որինակ՝ վոսկրի տուբերկուլոզը եդ ճանապարհով ե առաջ գալիս. ուղեղի, յերի-

կամունքների տուբերկուլոզը նույնպես: Տեսնում եմ, վոր միքանիսը հորանջում են. յերեւ վում ե՝ հոգնել եք. կուզեք միքիչ ընդհատում անենք, հետո շարունակենք:

— Ա, տղա, ի՞նչ արինք, վոր հոգնենք: Ըտոնց խասիաթն ա՝ տարին տասներկու ամիս կհորանջեն: — ասաց Ղազար բիձան:

— Շարունակեցէք, շարունակեցէք, լսում ենք, — ասացին զանազան կողմերից:

— Վոր վարակվելը ըտենց հեշտ ա, բախի չեն վողջն ել հիվանդանում, հարց տվեց գյուղխորհրդինախագահը Սարգսին, — ձեր բժիշկը ի՞նչ ա ասել ըստոր մասին:

— Վողջն ել, ասում եր, կամ շնչում են կամ կուլ տալիս ետ անգեր բացիները: Ամմա, ասում եր, խոսքը նրանն ա ուժ մարմինը պինդ ա, կամ ով վոր աշխատում ա իրա մարմինը պընդացնի, իր չորս կողմն ել մաքուր պահի: Ի հարկե, ասում եր, շատ ել լսվ կլիներ, վոր աշխարքումս ամենքն ել լեն ու բոլ ոթախներ ունենային ապրելու համար, լավ, լույս, արևոտ, չոր ու մաքուր տեղ ունենային, վոր սնունդն ել վողջի համար հավասար կերպով առատ ըլեր, ամա, ասում ա, մինչև ետ դրությունը ստեղծվի պետք ա, ասում ա, մարդիկ միքիչ ել խելքով ապրեն: Ով վոր, ասում ա, գրագետ ա, գրել-կարդալը իմա-

նում ա, նրա ընտանիքումը մահվան դեպքերը բիչ են ըլում: Գրագետ մարդը, ասում ա, համ ավելի մաքուր ապահում իր տունը, համ իրա ընտանիքի առողջության մասին ամտածում: Գրագիտությունը, ասում ա, արևի, լույսի, մաքուր ոդի, լավ սնունդի հետ, ամենառեժեղ զենքերից մեկն ահիվանդությունների դեմ կովելու համար, իսկ թոքախտի դեմ կովելու համար կրկնապատիկ չափով: Ահա թե ինչու յենք ասում՝ կորչի անզրագիտությունը:

—Ուրեմն, բժիշկն ասում ա, են մարդը, վորը հասկանում աթոքախտի անչափ վնասը, հասկանում ա, թե ինչ ճանապարհներով աետ տուբերկուլյոզի բացիլը մտնում մեր մարմինը և հալումաշ անում մարդուն, հետո յել համոզվում ա, վոր միակ միջոցը ետ վարակիչ հիվանդության դեմ իր մաքրասիրությունն ու առողջապրուստն ա, ըտենց մարդը, ասում ա, իրա մարմինը պնդացնում ա, առողջացնում ա: Ըտենց առողջ մարդը ասում ա, թե վոր վարակվում ել ա, ետ վարակը նրան հաղթում չի, ընդհակառակը ինքն ա վարակին հաղթում: Ըտենց մարդը թեև վարակվում ել ա, ամամ հիվանդանում չի:

—Ուրեմն, բժիշկն ասում ա, վարակվելը դեռ չի նշանակում հիվանդանալ:

—Ինքը, բնությունն ել, առանց դեղի, առանց

բժշկի աշխատում ա հիվանդ մարդուն առողջացնել: Վոնց վոր, ասում ա, շատ մարդ կա, վոր ուրիշ հիվանդությունից ա մահանում, ամմա տենում ես՝ ըտենց մարմինի մեջ տուբերկուլյոզ ա ըլեր մարդը հիվանդոցել ա, որինակի համար, թոքախտով, հետո ինքը-ինքը առողջացել: Սկի խաբար ել չի ըլեր վոր ինքը թոքախտից հիվանդացել ա: Բժիշկն ասում ել, վոր ետ անդեր բացիլները մարմինի մեջ բորբոքում են առաջ բերում, այսինքն, ասում եր, նրանց բուն դրած տեղը, որինակ թոքերումը կարմրություն, ուռուցք, տաքություն են առաջ բերում, հետո, ասում ա, վոր հիվանդությունը առաջ ագնում, բացիլները սկսում են թոքերը լավել փչ յնել:

—Ետ բացիլների խասիաթներից մեկն ել են ա, վոր ըտենը թույն են առաջ բերում: Ետ թույնն ա, ասում եր, պատճառը, վոր տաքություն ա առաջ գալի: Հիվանդը ծակոցներ ա ունենում, հետո կամաց-կամաց թուլանում ա: Մարդու մարմինը, նրա արյունը ետ թույնի դեմ, ասում ա, աշխատում ա մի ուրիշ թույն պատրաստի, վոր նրան կապի: Վոնց վոր, ասում ա, թունավորված մարդուն մածուն են տալի, վոր յեղած թույնը կապի: Եդ թույնի անունը, վոր մարմինը բացիլների թույնի դեմ ա պատրաստում— հակաթույն ա կոչվում:

—Հիմա բժիշկն ասում ա, ով վոր աշխատել ա իրա մարմինը պինդ պահի, մաքուր պահի, արեի տակ լույսի մեջ, մաքուր ոգում շատ ըլի— են ա, ասում ա, ըտենց մարդկանց մարմնի մեջ ետ հակաթույնը շատ ա պատրաստվում։ Ասես, բնությունը ըտենց խելացի կյանք ունեցողներին վարձատրում ա, ետ տեսակ մարդիկ են, ասում ա, վոր թեե տուբերկուլյոզով վարակվում են, ամմա հիվանդանում չեն։

— Ներողություն, յես մի հարց տամ,—ասաց հազար թիծան, —ասենք վոր մայրը թոքախտունի, ծնված ըրեխան թոքախտով ա լիս աշխարհ գալի՞։

— Ետ հարցն ել ելին տալիս բժշկին, ասում եր՝ միաներդ պահեք, թոքախտով հիվանդ ծնողներից ըրեխերը առողջ են ծնվում։ Հազարից մինը չի պատահի, վոր ծնվածը մոր արգանգում ըլի վարսկված։ Բոտեղ բժիշկը շատ եր խոսում ազիտությունից։ Ասում եր՝ են անմեղ մանուկները իրանց հիվանդ ծնողների զոհերն են։ Ըտոր հմար խշատ եր տալի, վոր հիվանդ մայրը ըրեխին ծիծ տալուց ըրեխի յերեսնիվեր չխոսի, չհամբուրի, իրա կողքին չպառկացնի։ Դե, դուք գիտեք, ասում եր, վոր թոքախտավորի հազից են վարակվում, նրա խուխից։ Ամեն մի խոսելուց, հազարուց փոշտալուց ետ անդեր խովի կտորնե-

ըը ընկնում են ըրեխի յերեսին, վոնց վոր մեծերի հետ, ընենց ել ըրեխոց։

— Ըտոր հմար ել խրատ եր տալի, վոր ըրեխի շորերը, նրա գդալը, սրբիչը առանձին պահվի։ Մայրն ել իր ձեռքերը շուտ շուտ լվանա, իր աղլուխն ել առանձին, իր սրբիչն եր, իր գդալն ել առանձին պահի, Յերբեք, ասում եր, հիվանդը իր աղլուխով կամ սրբիչով ըրեխի յերեսը, բերանը չսրբի։ Համ եր ասում եր, վատ սովորություն կավոչ թե մենակ գեղերումը, այլ լուսավոր համարված քաղաքներումն եր, վոր մայրը ըրեխի ուտելիքը առաջ քցում ա իր բերանը, ծամում կակղացնում ու հետո դնում ըրեխի բերանը։ Յեթե, ասում ա, մայրերը իմանային, թե ըտենց անելով վորքան մեծ թշնամություն են անում իրանց հարազատ զավակներին։ Ըտոր համար ել, ասում ա, հազար ըրեխուց մինչև մի տարեկան հասակը 300-ը մահանում են։

— Մեծերն ել, ասում ա, վոր գդալփոխ են անում, մի ամանից են ուտում, ելի մեծ վնաս են հասցնում իրանց հարազատներին։ Միտքներդ պահեք, ասում ա, վոր թոքախտավորի թթի մեջ վարակիչ բացիլներ շատ կան։

— Միմավոն, Գևորգ, Սարգիս, Ալի, Մահմեդ, Արմենակ, Լևոն—գիմեր մեղ բժիշկը, — վոր տունդառնաք, չմոռանաք, ժողով արեք ձեր գեղա-

ցիների հետ, մեկ-մեկ իմ ասածները խոսեք, բացատրեք, իմ կողմից ել, ասում եր, բարով արեք ձեր մայրերին, քույրերին, կանանց, ասեք բժիշկն ասել ա՝ ձեր լնտանիքի վիճակը ձեր ձեռքութիւնն ա: Ամեն մեկդ, ասում եր, ամեն որ հավասով ձեր տան քունջ ու պուճախը մաքրեք, ընենց սարքեք, ընենց մաքրեք, ասես ազիզ որվա հմար եք մաքրում: Զեր անկողինները, ասում եր, ամեն որ դուրս բերեք արևի տակ, արև չըլած վախտն ել դուրս բերեք, լուսամուտը շուտ-շուտ բաց արեք, վոր թարմ, մաքրուր ողը մտնի ոթախը: Ոթախն ել, կասեք, թաց ավելով մաքրեն, վոր թող չբարձրանա, տան իրերն ել, կասեք, թաց շորով սրբեն, վոր ելի թող չբարձրանա: Ոթախի մեջ, կասեք, վոր լվացը չանեն, լվացը չչորացնեն: Հիվանդի շորերն ել առանձին յեփ տան, լվանան: Դուք, ասում եր, կրացատրեք, թե ինչու համար:

— Զրից, ասում եր, շատ ոգտվեցեք, շուտ-շուտ ըրեխանց լողացրեք, տանը վողչն ել սառը ջորվ թող մի լավ սրբեն իրանց մարմինը. սառը ջուրը, ասում եր, պնդացնում ա մարմինը:

— Խեղճ են, ասում ա, մեր ըրեխեքը. կասեք, վոր ըրեխաններին ցըտի սովորացնեն: Թե չե, ասում ա, յես գիտեմ, մեր գեղերումը խեղճ ըրեխանց՝ ինչ վոր շոր կա՝ միմյանց վրա հաղցնում են, յորդաններում փաթաթում, փախում են, վոր

«ազիզը չմըսի»: Ամենից գլխավորն ա, ասում եք, վոր արևից, լուսից շատ ոգտվեք: Միշտ մաներդ պահեք, վոր թոքախտի կամ ուրիշ տեսակի տուբերկուլոզի հիվանդության դեմ ամենաուժեղ, ամենազօրեղ միջոցը արեվի լուսն ա, հանգիստ, մաքուր, չափավոր կյանքը»:



Նկ. 9. Մանկական հրապարակ.

— Արևի լուսը, թարմ ողը բացիլների թշնամին ա, իսկ մաքուր, չափավոր ապրուստը մարմինն ա պնդացնում ու առողջացնում:

— Ղորթ ա, ասում ա, եդ բացիլներից առաջացած պատուհասը թոփ ու գյուղի չարիքից շատ ա, ամմա, ասում ա, հավաքական ուժով,

խելացի կյանքով մենք կարող ենք հաղթել եդ
անկուշտ վիշապին:

—Եղանակ, ասում ա, վոր ձեռք-ձեռքի տված
աշխատենք, կտեսնեք, վոր հին առակը ավելի
մասին շատ գուզ ա, ասած. ավելի առանձին
ճիպտները ըրեխան ել մեկ-մեկ կկոտրի, ամմա
տղաժարդ պտես ըլի, վոր վողջ ավելը միջից
կոտրես: Բայց հավաքական ավելն ա, վոր պետք
ա սրբի-մաքրի մեր կեղտոտ, անառողջ կյանքը:

—Խորհրդային յերկրումը, ասում ա, մեծ պա-
տերազմ ա սկսվել առւբերկուլյողի դեմ: Պետու-
թյունը, աշխատավոր հասարակությունը ձեռք-
ձեռքի տված նոր, հարմար շինություններ ա
շինում բանվորների և աշխատավոր գյուղացի-
ների համար, հարլուրավոր հանգստյան տներ,
սրնատորներ, տուբերկուլյողի բուժարաններ
են շինում, վոր աշխատավոր գյուղացիությունը,
բանվորները, ծառալողները համ իրանց թուլա-
ցած առողջությունը, իրանց հիվանդությունը
բժշկեն, համ ել սովորեն ըտեղ, թե վոնց պետք
ա հետեւն իրանց առողջությանը, վոր ել չհի-
վանդանան: Բժիշկը ելի դիմում եր մեզ, ասում եր՝
լավ կիիներ, վոր մեր յերկրի հիվանդները վողջն
ել սընատորում բժշկվելին: Սընատորումը, ա-
սում ա, ամեն մի հիվանդ ամսական 150 մա-
նեթ փող ա նստում: Պետությունը, ասում ա,

վորքան ել հարուստ ըլի, ելի կարող չի բոլոր
հիվանդներին սանատորիա ուղարկել:

—Մենք, ասում ա, մեր կյանքը, մեր նիստու-
կացը պետք ա ընենց փոխենք, ընենց լավաց-
նենք, վոր հիվանդությունը արմատումը վոշն-
չացնենք: Զպետք ա, ասում ա, սպասենք, վոր
հիվանդությունը գա մեզ հաղթի, մեր կյանքն,
ասում ա, պետք ա ընենց խելացի, մտածված, առա-
ջուց մտածված ճամպով տանենք, վոր մենք հաղ-
թենք հիվանդությանը: Ըստոր համար ել, ասում ա,
Սարգիս, վոր գնաս գեղը, ընտեղ խոսիր ում
հարկն ա, վոր ուժեղացնեն գյուղիսորհրդի սանի-
տարական սեկցիայի աշխատանքները: Բժիշկն
ասում եր՝ հիմա մտքներումդ ասում՝ եր՝ խոսելը,
զրից անելը հեշտ բան ա, են ել բժշկի համար,
սկի մեր հալիցը խաբար ունես: Համ ասում եր,
համ ել ինքը պատասխանում: Ասում եր՝ շատ
լավ զիտեմ, շատ ադվար, ասում եր, մեր պայ-
մաններում նոր, ասողջ կյանք ստեղծելը, ամմա,
ասում եր թեև մերնոր ճամպան շատ աքարքարոտ,
շատ ա խորդուբորդ, ամմա, ասում եր, վոր ամեն
մի ճամպորդ ամեն անցնելուց մի քար զլորի
զեպի հին անդունդը, են ա, ասում եր, մեր նոր
կյանքի, նոր, լուսավոր ապրուստի համար մի
ուղիղ ճամպա կբացվի: Են վախտն, ասում ա,
մենք վոր չտենանք, մեր ըրեխեքը կհամոզվեն,
վոր կարելի յա ամեն մի բանվորի բնակարան,


ամեն մի գեղացու խրճիթ մեկ-մեկ պուռուր
սընատոր շինել:

— Սընատորից դուրս գալիս բժիշկը ձեռքս
սեղմեց, ասաց՝ տե՛ս, Մարդիս, քեզ վրա յես մեծ
հույս ունեմ, են առողջապահական բժիշում աշ-
խատիր դու յել ընտրվես, մնացած ընտրվածների
անուններն ել ինձ կորես:

— Եատ գործ կա անելու, շատ ել ոգտավետ
գործ կըլի, վոր խելք-խելքի տաք, ինչ վոր հնա-
րավոր ա անեք, վոր գեղումը ձեր նիստու-
կացը, ձեր ապրուստի ձևը փոխեք—բարելավեք,
վոր են անդեր, թոքախտի արմատները կամաց-
կամաց չորացնեք: Մին ել ասեց, մոռանաս
վոչ, գեղումը վոր զրից անես, հազար տեսակ
հարցեր են տալու. կարող ա վոր քեզ համար
ել անհասկանալի ըլի: Ես ա դու յել, գեղացիք ել
կդիմեք ձեր շըշանի բժշկին. նա ձեզ մանրամասն
կբացատրի:

— Ախպե՞ր, յեկե՞ք եղ առողջապահական բժի-
շում ինձ ել ընտրեք, խելքիս նստեց. եղ գործը
մե՛ծ զործ ա. կտենաք, վոր ջահելներիցդ յետ
չեմ մն ոլ,—ասաց Ղազար բիծան: — Թավադ ամին
ել չիբուխը բերնից հանեց, ձեռքով ճակատի
քրտինքը սրբեց ու սրտի խորքիցն ասաց.

— Ի՞նձ ել քցեք եղ հավաքական ուժի մեջ,
զրանով ա, վոր մենք ետ անդեր առ քերկուրդի
բոք ու արմատը կչորացնենք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0266693

7311

Д-р. Г. САГИЯНЦ

Беседа о туберкулезе



ԳԻՒՆ Ե 15 ԿՈԴ.